

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

3507 ՏԱՐԻ

1886 ԱՊՐԻԼ 19

ԹԻԻ 3818

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 19 ԱՊՐԻԼ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՁԻՆԱՍՏԱՆ ԸՆԴՊԵՄ ԵՒՐՈՊԵԱՆ

Ձինաստան ցարդ անսպառելի աղբիւրը մնացած է բոլոր այն մատենագրաց որք կ'ուզեն իրենց ընթերցողաց ունիւն և ուրուշը գրաւել, պատմելի նիւթին շահեկանութեամբ: Արդարեւ, մէկդի թողլով Եւրոպացիներն, մեր մէջ իսկ հարեւանցի ըննութիւն մը կը հաստատէ այս իրողութեան բոլոր ճշմարտութիւնը: Հայ պարբերական ամեն հրատարակութիւնք, ի գլուխ ունենալով Բաղդադ, միշտ խօսած ու գրած են չինական բարուց, սովորութեանց, արուեստից, գրականութեան, կառավարութեան ևս վրայ: Այս մէկ կապ կը կապէ զմեզ այդ հեռաբնակ ժողովրդեան, այլ չես գիտեր ի՛նչ կայ այդ « չինացի » անուան մէջ որ մեր հետաքրքրութիւնը կը գրգռէ: Այդ հետաքրքրութեան յենլով է որ այսօր կուգամ խօսիլ այդքան ծեծուած նիւթի մը վրայ: Սակայն մի՛ սպասէք որ պատմեմ ձեզ Ձինացիք ի՛նչ կերպիւ կը տօնեն իրենց կաղանդը, թէ ի՛նչ համադամներ կը պատրաստեն զագրելի միջատներէ, թէ Երկնային Կայսրութեան զաւակներն ի՛նչ յառաջդիմութիւններ ըրած են արհեստից և գրականութեան մէջ, թէ ի՛նչ է մանտարին մը, պօնդ մը ևս: Ձէ՛, աղոնցմէ շատ աւելի կարեւոր իրողութիւն մը կը կազմէ յօդուածիս նպատակը, — այսինքն Ձինաստան

ընդդէմ Եւրոպայի, դեղին ցեղն ընդդէմ սպիտակ ցեղին: Մոռցուած չէ անշուշտ բանախօսութիւնն զոր անցեալ տարի Պարոն տը Հիւպնէր ըրաւ Վիէննայի մէջ, բանախօսութիւն որ ամենուրեք մեծ ազմուկ յարոյց: Մեծանուն ուղեւորը ցոյց կուտար թէ Երկնային Կայսրութեան ժողովուրդն ի՛նչպէս սկսած է ողողել աշխարհս համայն եւ չէր համարձակեր մատնանիլ ընել այն աղետալի հետեւանքներն զորս դեղին ցեղին այս յամր ու յարաճուն արշաւանքն պիտի ունենար ընդհանուր քաղաքակրթութեան տեսակէտով: Ըստ Պարոն տը Հիւպնէրի, քսաներորդ դարուն է որ պիտի խաղցուի այս մեծ տռամն եւ պիտի սկսի այս հրակայական կռիւն ընդմէջ սպիտակ և դեղին ցեղերուն: Պարոն տը Հիւպնէր կը կրկնէ այդ արդարացի գաղափարներն իւր նորատիպ գրքոյն մէջ, Բրիտանական Կայսրութիւնն: Այդ գրքին Ձինացի գլուխը կերպիւ լիւր ամիսիւմն և լրացուցիչ մասն է Վիէննայի հռչակաւոր բանախօսութեան: Այս տեսակէտով, հարկ կը համարինք յառաջ բերել անոր մի քանի հատուածները.

« Անգլիոյ եւ Ֆրանսայի վերջին պատերազմն ընդդէմ Ձինաստանի, ըստ իս անհուն կարեւորութիւն ունեցող դէպք մ'է ո՛չ թէ նիզակակից բանակներուն մաստկած դիւրին դափնեաց պատճառաւ, այլ որովհետեւ ջնջեց ճշմարիտ ինտիմ պարիսպն, այն որ յանդիմատակ ժամանակաց անտի բաժնած էր չորս հարիւր միլիոն բնակիչ մարդկային սեռի մնացեալ մասէն. Կոստանտնուպոլիս Եւրոպայի Կայսրութեան արջաւազն, 1860 էն ի վեր Միջին Կայսրութիւնն այցելող սպիտակ ուղեւորաց թիւը շատ աւելցած է: Ձեմ կար-

ծեր, ի բաց առեալ ազատ նաւահանգստաց եւրոպական գործակատարներն, ո՛չ որ կ'երթայ անդ, եթէ ոչ՝ անցեւոյն նման միսիոնարներ, գլխովեան քոյրեր եւ քանի մը աշխարհագէտներ: Այլ Ձինացիք դուրս վիժած են իրենց բանտին բաց դռներէն: Մինչեւ ցարդ հեռու կենալով բազմամարդ երկիրներէ եւ նախընտրելով սակաւարեան տէրութիւնները, խառն Գաբիէն է վեր կ'ողջեն երկրաբան երես շրջապէս: Իրենք եւս գաղթականներ են: Բնականէն օժտեալ զանազան ձիրքերով, սակայն մտաւորական տեսակէտով կովկասեան ցեղէն ստորին, չափազանց գործունեայ եւ ժուժկալ, ի ծնէ վաճառական եւ իբր այն խիստ ուղղամիտ, ընտիր հողագործ, առաջնակարգ պարտիզպան, աննման խոհարար, ձեռքի աշխատութեանց մէջ ամենուն հաւասար, Ձինացիին կը յարձակի սպիտակ մարդուն դէմ ուր որ հանդիպի: Ո՛չ թէ բռնութեամբ, այլ աշխատութեան եւ ժուժկալութեան գէնքերով կը կասեցնէ զայն, կը յաղթէ, ձեռքէն կը խլէ ամէն ինչ: Իւր յաջողութեան գաղտնիքը դիւրաւ կը հասկցուի: Ի շնորհս իւր բարեմասնութեանց, իւր Ֆիլիքական կազմութեան եւ սովորութեանց, կարող է ընել ամեն ինչ կէս գնով, ամեն ինչ իմ ցոյց տուած սահմանացս մէջ:

«Ակնարկ մը նետենք իւր յաղթութեանց վրայ, որոց թուականը դեռ չատ նոր է, եւ աստ պիտի յիշատակեմ միայն իրողութիւններ զորս ես իսկ հաստատած եմ անձամբ անձին: 1871 ին, անգլո-չինական բոլոր վաճառականութիւնն անգլիական երեք մեծ տանց, Հոնկ-Քոնկի եւ Շանկայի մէջ հաստատեալ ամերիկեան տան մը, եւ անգլիացի եւ գերմանացի քանի մը երկրորդական վաճառականաց ձեռքն էր: Նըմանապէս անգլիացի, գերմանացի, ամերիկացի վաճառականներ իբր միջնորդ կը ծառայէին այդ տանց եւ բնիկ վաճառականաց միջեւ, որոց դերն էր երկրին ներքերը ցըրուել ներածեալ ապրանքներն: Ամերիկեան տունն ունէր քսան շոգենաւ որք կ'երթեւեկէին Նանկ-Ձէի ազատ նաւահանգստաց եւ ծովեզերաց միջեւ: Այսօր, օտար վաճառատանց թիւը շատ իջած է, եւ բոլոր վաճառականութիւնը Ձինացուց ձեռքն անցած է: Բնիկ ընկերութիւններ գնած են

ամերիկեան շոգենաւեր: Միջին Կայսրութեան եւ Անգլիոյ միջեւ առեւտրական շարժումը նոյն մնացած է: Այդ շարժում այսօր կը հաշուի իբր 42 միլիոն անգլիական ոսկի, այլ շահուց մեծ մասը չինացի վաճառականաց ձեռքը կ'անցնի:»

Պարոն տը Հիւսնէր ապա վիճակագրերով ցոյց կուտայ չինական գաղթականութեան յարատեւ աճումն աշխարհիս ամեն մասանց մէջ, մանաւանդ յովկիանիա, Սաղաղականի կղզիներն, եւ գլխաւորաբար յՍ. մերիկա, ուր զսպողական միջոցներու ծրնունդ տուած է իւր տարօրինակ ծաւալմամբ: Դեռ վերջերս իսկ եւրոպական լրագիրներէն թարգմանեցինք հեռագրեր որք կը պատմէին Միացեալ Նահանգաց մէջ ծագած ծանր կռիւներ ընդդէմ Ձինացուց: Միացեալ Նահանգաց արեւմտեան նահանգներն, մանաւանդ Սան-Ֆրանչիսկո, որողուած են չինացի գաղթականներով, որք գծուծ տնակներու մէջ ապրելով, չոր հաց ուտելով, բնիկ գործաւորին հաջը բերնէն կը խեն, ամեն առձեռն գործերը կատարելով չնչին փոխարինութեամբ: Ուսչինիկընի կառավարութիւնն ուրիշ միջոց չէ գտած բայց եթէ ծանր սեղմումներ դնել արգիլելու համար այդ մարդկային հոսանքն: Սակայն Ձինացիին պատերէն մղուող ջուրին նման՝ կը սպրդի ամեն ծակերէն եւ զերդ բաղեղ փաթթուելով սպիտակ ցեղին՝ կը ծծէ ու կը չորցնէ զայն: — Պարոն տը Հիւսնէր հետեւեալ կերպիւ կ'աւարտէ վերոյիշեալ գլուխը:

«Եւրոպիոյ մէջ, Ձինացիները թուղթի վրայ միայն կը ճանչեն: Իրաւ է թէ անհաճոյ եւ անձազ կը դառնան զայնս, սակայն բնաւ հոգ չեն ըներ եւ չեն հարցներ թէ ի՞նչ պիտի լինի առաւել կամ նուազ մերձաւոր ապագայի մը մէջ: Բայց եթէ ընենէին վիճակագրերն, պիտի զարմանային — եւ իմ մասին ես կը սարսափիմ — այդ ցեղին յարաճուն յառաջդիմութեան վրայ: Այս պարագայից մէջ, ինձ այնպէս կը թուի թէ Գերմանացիներն, Անգլիացուց, Իռլանտացուց, Շուէտ-Նորվեգիացուց, Իտալացուց, վերջապէս եւրոպացի ամեն ազգաց գաղթականներուն միանալով, հազու կը բաւեն կասեցնելու համար, արուեստի եւ հողագործութեան գէնքերով, հոսանքներն

գորս այդ անհուն մարմինն, Միջին կայսրութիւն անուանեալ, անդադար դուրս կուտայ իւր կողերէն: Այս շարժումն օր մը պիտի կասի՞ ինքնին, այդ յարատեւ արիւննումները վերջ ի վերջոյ պիտի չորցնեն կենսական աղբիւրներն ազգի մը որ հարկւր միլիոն աւելի բնակիչ ունի քան Եւրոպիոյ բոլոր բնակիչներն ի միասին: Չենք գիտեր: Ոչ ոք կրնայ թափանցել Նախախնամութեան գաղտնեաց: Այլ սա բացայայտ կը տեսնենք թէ երկու անհուն ջրէղջներ կան որք կը գեղուն: Երկու գետեր ծագում կ'առնուն անտի. սպիտակ գետը, դեղին գետը. մին՝ քրիստոնէական քաղաքակրթութեան սերմերով բեղմնաւորելով իւր անցած երկիրները, միւսն սպառնալով զայնս աւերել: Արդէն քանի մը կէտերու վրայ միմեանց կը հանդիպին, կ'ընդհարին, կը կռուին: Ուրիշ կէտերու վրայ, գծաութիւնն սկսելու վրայ է. ի՞նչ պիտի լինի վերջնական երբ: Գաւերորդ դարն է որ պիտի արձանագրէ զայն իւր տարեգրութեանց մէջ:

Ինչպէս կը տեսնուի այս հակիրճ տողերէն, մերձաւոր ապագայի մը մէջ չինական խնդիրն Եւրոպիոյ և համայն աշխարհի առջեւ պիտի ելնէ: Անհուն կարեւորութիւն ունեցող խնդիր մը կայ անդ, որ մեր բարոյական թէ նիւթական քաղաքակրթութեան ապագային համար կրնայ անակնունելի հետեւանքներ ունենալ: Խնդիրը կը ներկայանայ երկու գլխաւոր երեւութից ներքեւ, — գաղթականութիւն և մրցում: Չինական գաղթականութիւնն, ինչպէս կը տեսնուի, օր քան զօր աւելի ընդարձակ համեմատութիւններ կ'առնու, եւ մարդ կը հարցնէ ինքնին թէ ի՞նչպէս կարելի է, մեր արդի բարբերով, կասեցնել այդ յամրնթացիկ ու յարատեւ հոսանքն: Վտանգը կրնայ շատ ծանր դառնալ, եւ մեր քաղաքակրթութիւնն կրնայ ծանրապէս կորստեան ենթարկուիլ այն օրն յորում գաղթային շարժումն ոչ թէ տակաւ առ տակաւ լինի, այլ դէպի Եւրոպա մղէ, միաբան եւ անդիմադրելի եռանդով մը, ժողովրդեան այն ահագին կոյտերն որոց անսպառելի ամբար մ'է Չինաստան: Պէտք չէ մոռնալ թէ Չինաստան, ըստ ամենայն հաւանականութեան, իբր չորս հարիւր միլիոն բնակիչ կը

պարունակէ, այսինքն Եւրոպայէն հարիւր միլիոն աւելի: Այդ հոսանքին մէջ խեղդուելու վիճակին չե՞նք ենթարկուիր այն օրն ուր ամբողջովին գեղու: Գաղթականութեան յարատեւ աճումը կ'ապացուցանէ թէ ենթադրութիւն մը չէ այս. մեր աչքին առջեւ ունինք սկզբնաւորութիւնն շարժման մը՝ որ ապագայ համեմատութիւններն եւ վերջնական հետեւանքները դժուարին է ընդնշմարել:

Գալով մրցման, աստ եւս վտանգը կարծուածէն աւելի ճշմարիտ է: Յրանացի պաշտօնատար մը որ երկար տարիներ Չինաստան կեցած է, Պ. Սիմոն, օր մը կը գըրէր Նոմէլ Ռեպլի մէջ թէ, երբ Չինաստան ձեռնարկէր լրջութեամբ մրցիլ Եւրոպիոյ հետ, իրմէ փոխ առնելով իւր հնարքներն եւ մեքենայներն, քիչ ժամանակի մէջ հիմն ի վեր կը տապալէր մեր ճարտարութիւնն, ի շնորհս աշխատող բազուկներու առատութեան եւ գործաւորաց չնչին վարձուց: Պարոն տը Հիւպնէր եւս այդ կարծիքէն է:

Ուրեմն Չինական խնդիր մը կայ, խնդիր որ տակաւին մութ կը մնայ այսօր, այլ որ ապահովապէս օր մը պիտի խաղայ ամենամեծ դեր մը և չափազանց պիտի ներգործէ քսաներորդ դարու ճակատագրին վրայ: Ար մաղթէի որ մինչեւ այն ժամանակ Աստուած հեռու պահէր զմեզ այդ դեղնամորթ սատանայներէն:

Լ. Բ.

ԳԱԻԱՌԱՅ ՎԻՃԱԿԸ

ՄԱՐԶՈՒԱՆՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԸ

(Շար. նախորդ թուէն եւ վերջ)

Ի Սի-Հաի-գիւ, որ Մարզուանէ երկու ժամ հեռի է, Հայերն (լուսաւորչական եւ բողոքական) ունին իրենց մասնաւոր հաստատութիւններն, թէպէտ եւ ոչ մին գահացիչ է: Յաւալին այն է զի, այլ և այլ

կուսակցութիւններ կը տիրեն իրենց մէջ : Պապականութիւնն 12 տարի առաջ իբր տասն տուն հետեւողներ ունէր : Ասոնք չընորհիւ Եղեսեանի վերադարձան ի գիրկ մայրենի եկեղեցւոյ : Սակայն վերջին տարիներս, կուսակցութեանց պատճառաւ պառակտելով նորէն, իրենց դպրոցն եւ ազգային գործերն անխնամ թողուած են բոլորովին : Ասկից զատ, որովհետեւ ամեն ոք գիտէ թէ պապականք տուրքէ եւ ամեն տեսակ դաժապարտութենէ կ'ազատեն իրենց հետեւողներն, իրենց մէջէն սկսած են հետեւել նոցա : Կան նաեւ ազգայինք ոմանք որք թէեւ քիչ շատ հարուստ են, բայց վշտացած են ոմանց եւ անոր համար կ'ուզեն յարիւ կաթողիկոսութեան : Աշճեան Մկրտիչ հայրն, քանի մ'որ մնալով անդ, խոստացած է ի մօտոյ եռանդուն քարոզիչ վարդապետ մը զրկել իրենց : — Տարակոյս չը կայ որ ազդեցիկ առաջնորդի մը ներկայութիւնն գոնէ հոս անմիջական արդիւնքն պիտի ունենար, արոց արդար բաշխում մը ձեռք բերելով և ազգային գործոց կանոնաւոր ընթացք մը տալով :

Հաճի-գլուղ ունի շատ գեղեցիկ եւ փառաւոր եկեղեցի մը . ունի բաւական կալուածներ : Եկեղեցին եւս ունէր շատ մը պատուական սպասներ եւ արծաթեղէն աւօթներ, բայց չորս տարի յառաջ գողեր մտնելով յիշեալ եկեղեցին կողոպտած են զայն բոլորովին :

ՅԱԽԼԷՆ - Հաճի-գլուղ եւ Կիւմիշ Մարզուանու մօտ գիւղեր են, առաջինն չորս ժամ եւ երկրորդն երեք ժամ հեռաւորութեամբ : Այլաթ 40 տուն կայ կայ, որոց 20ը լուսաւորչական եւ 20ը բողոքական են . ո՛չ եկեղեցի ունին, ո՛չ դպրոց եւ ո՛չ ալ քահանայ . գրեթէ ամենեքին բողոքականաց ժողովարանը կը յաճախեն . խեղճ վիճակ մ'ունին : Նոյնպէս Կիւմիշ ուր գլխունուղ 15 հայոց 2ը բողոքական են, վերիններէն տարբերութիւն չունին, միայն թէ կիրակի օրը կէս ժամ հեռի եղող Հաճի-գլուղի եկեղեցին կ'երթան :

ԱՄԱՍԻԱ կան երեք Ճիզվիթ հայրեր, մեծաւոր ունենալով զՄ. Բոթէ եւ երկու պապական հայ քահանաներ, որք Տրապիզոնի առաջնորդին իրաւասութեան կը վերաբերին : Իրենց հաւատատարածման եղանակը անփոփոխ է ամէն տեղ : Աշճեան

Գերապայծառ մինչեւ իրիկուն կառավարութեան դուռը կը դեգերի եւ երբ կը տեսնէ տուրքի համար բանտարկեալ կամ դատի մը պատճառաւ դատաւարտեալ հայ մը, անմիջապէս կ'երթայ զայն կ'ազատէ եւ քաջխառն ըլլալով եւ սակաւ ինչ յետոյ իւր փարալը կը մուծանէ : Եւ եթէ կայ բան մը որ բազմիցս գայթակղութեան պատճառ եղած է, այն ալ իւր սաստիկ նախանձախնդրութիւնն է : Շատ աշխատեցաւ վերջերս Խտարէի ժողովոյն մէջ կաթողիկանդամ մը դնել տալու, բայց հայ բողոքական անդամը սաստկապէս ընդդիմացաւ, առարկելով թէ՝ Ամասիոյ մէջ կաթողիկ ազգութիւն մը չը կար եւ որոյ ձայնակցելով միւս անդամը, մերժուեցաւ իւր խնդիրքը : Բայց եթէ հրովարտակն ելած լինէր, անշուշտ տարբեր պիտի ըլլար, եւ այս տարուան յաջողութիւնն դալ տարի ձախորդութիւն պիտի դառնայ :

Աշճեան Մկրտիչ վարդապետին մօլեռանդութիւնն, որ անդադար հերետիկոս կը քարոզէր զՀայս, պարտաւորեց կղերն եւ ազգին ուսումնականներն որ միանգամ ընդ միշտ հարուած մը տան ազգին գոյութեան սպառնացող այս ձկտմանց : Ուստի մի քանի շաբաթ առեւտարանութիւններ եղան յեկեղեցին ուր պատմական եւ չօշափելի ապացոյցներով ցոյց տրուեցաւ մեծ վտանգն որ կրնար ծագիլ, որով շատերը ետ դարձան : Իրենց հետեւողաց այժմու թիւն է 15 : Պապական դպրոցը կը յաճախեն 46 հայ ժողայր . մեծ հաւանականութիւն կայ որ ասոնք ալ միանան երբ Պոլսէն սպասուած նոր դասատուն գայ : Ամասիոյ ազգային դպրոցներն կը կառավարուէին մեծաւ մասամբ կալուածներէ եւ որք վերջին հրդեհէն ոչնչանալով ի հարկէ դպրոցները տկարացած էին : Նոր հանգանակութիւն մը սկսուեցաւ որ այժմ հասած է 250 ոսկւոյ եւ որ յատկացուած է դպրոցին :

Բողոքական ազգայնոց ընթացքն շատ քովելի էր, որք միացած ազգայնոց հետ հասարակաց թշնամոյն դէմ՝ փութացին նաեւ նիւթապէս օգնել դպրոցներու յաջողութեան նպաստելու . ազգովին շնորհակալութեան արժանի են իրենց Քարոզին և Ազգապետին ընթացքը :

ՎՏԱՐԱՆԴԻՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՒԱՐԱՆԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱՀԱՆԻԿԱՆ

Շատ տարիներից ի վեր Վիեննայում հաստատված է հաւաքանական մի ընկերութիւն, որոյ նպատակն է իր մասնագէտ անդամ ընկերների օժանդակութեամբ թրուշնարութիւնը ծաղկեցնել, հաւաքանական ժողովածոյը հարստացնել, ամեն տարի հանդէս ածել ուսումնասիրութեանց արդիւնքը եւ ոսկեայ, արծաթեայ պատուանշան եւ իրեղէններով պսակել անդամակիցների աշխատասիրութիւնները:

Այս տեսակ միջակ եւ մասնագիտական սահմանափակ աշխարհահանդէսների համար «Րինկ Շտրասէյի» վրա յատուկ մի պալատ կայ, որ կոչւում է Gartenbaugesellschaft: Այս տեղ են լինում, կարգ ըստ կարգէ, այլ եւ այլ աշխարհահանդէսը՝ խոհարարական, ծաղկաբանական, բուսաբանական, շնական եւ: Պալատը մի պարտիզի մէջ կառուցած է, թէպէտ շատ մեծ չէ, բայց վայելչաձեւ եւ շնորհալի, ինչպէս լինում են առ հասարակ Վիեննայի ճաշկազէտ ճարտարապետաց յատուկ ոճով շինված միւս բոլոր ագնիւ շէնքերը, որոնք միջազգային գեղարուեստական օրինակներ են դարձած:

Աշխարհահանդէսների ծառայող յիշեալ պալատի յատակագիծը խաչաձեւ է: Գլխաւոր դռնից մտնելով, թռչնաբանական աշխարհահանդէսը երեւում է երկայնաձիգ մի սրահում, որոյ աջ ու ձախ կողմերը խաչաձեւ շէնքին թեւերն են ներկայացնում: Այժմ դառնում նկարագրութեան. բայց ի՞նչպէս սկսեմ, ինքս էլ չը գիտեմ: Ներս մտնողին վրա առաջին օրպէական տպաւորութիւնը բոլորովին օտարոտի եւ անսովոր է լինում, քիչ յետոյ սակայն վարժվում է:

Փողոցի սառնաշունչ ցրտից մարդ մտնում է յանկարծ արեւադարձական կլիմայի մի ջերմութեան տակ. հաւնոցի սարսափելի մի հոտ, հաղարաւոր թռչնոց միաբերան ճուռղղումը, կարկաչումը, թուփակների սուր ճիչերը, չչումները, արագաշների, հա-

ւերի, սագերի, բադերի, հնդկահաւերի, սիրամարդների անվերջանալի խառնաձայն երգեցողութիւնը, «բիբերիբի» յի անվախճան աղաղակները — վերջապէս սրանք բոլորը այնպիսի անախորժ եւ տարօրինակ մի ներգործութիւն են անում, որ ճշգրիտ նշկարագրել աշխարհահանդէսը՝ դոնէ ինձ համար անկարելի է: Ամենից առաջ սկսենք նկարագրել գլխաւոր սրահը, որոյ կենտրոնում՝ սենեակների չափ մեծ վանդակների մէջ հանդէս դրված են սիրամարդները. այնքան աննման եւ գեղեցիկ են, որ հասարակ սիրամարդներից տարբեր լինելով, նախ սրանք աչքի են զարնում, ամենահազուադիւս եւ ամենամեծ տեսակներից: Իրանց չքեղադարձ պոչերի, թագածեւ գլուխների փայլուն գոյներովը աչքեր են շլացնում: Հինգ վեց մետր բարձրութեամբ վանդակների մէջտեղից դրված են ձողեր, որոնց վրա օրօրվելու համար թռչում բարձրանում են, եւ այդ բարձրութիւնից փառաւոր պոչերնին գետնին են ըսում: Մին էլ յանկարծ մինը իջնում է ձողից, բայց է անում երկներանգ փետուրներով յարդարված հսկայական մի տուռն, նման լայնատարած մի հովհարի, որ բաւական է մի խումբ ամօթխած կոյսերի երեսները քողարկելու:

Սիրամարդների վանդակից քիչ հեռու դրված է ոսկեփառանների վանդակը: Ո՞րպիսի առատ գոյների ազգ ունին այս ըսքանչելի հաւերի փետուրները, գլխից սկսած մինչ ագին, ի՞նչ կենդանի գոյներ, ի՞նչ պաղպաջուն ներկեր. արդեօք ի՞նչքան մեծ աշխատութիւններ տուած պէտք է լինեն նկարիչը նոյնանման գոյների բաղադրութեանց համար, այնու ամենայնիւ կարելի է ասել, որ կատարելապէս յաջողված են:

Յետոյ գալիս են թութակները, այդ շատխօս, աղմկալից եւ ծաղրածու թռչունները, ամեն աշխարհից, իւրաքանչիւր տեսակից ամեն գոյնի հաւաքվել են՝ մեծ, միջակ, փոքր եւ թղուկ: Սրանց վանդակները մեծ սրահին պատերին են կցված. ականջներ են խլացնում միջազգային լեզուներով խօսքեր կարկաչելով, սուլելով եւ ճչելով: Մարդկանց եւ տիկնանց անուններ են արտասանում, բարձր աղաղակներով գոռում

գոչում են, եւրոպական ընդհանուր ծանօթ-
լեզուններով անընդհատ խօսում են, բղա-
ւում են, Ծրան, Արոֆ, Ծրեդիէ, Լեֆօլ, Ծրայայն Լիդա, Գարօլնա, եւ բացառականում
են, բայց այնքան մարդու ձայնի նման, որ
այցեւուններից շատերը խաբւում են, աջ ու-
ահեակ, յետ եւ յառաջ են նայում կարծե-
լով թէ իրանց ծանօթներին են կանչում,
յետոյ թուլակները իբր թէ հասկացած
լինէին սրանց խաբւիլը, սկսում են բարձ-
րաձայն քրքիջներով ծիծաղել: Ի միջի այլոց
թուլակներից մինը — որ տիրոջը սիրելին և
անբաժանելին կը լինի անշուշտ, որովհետեւ
վանդակին վրա կախված է մի յայտագիր,
Eigenthum, Unverkauflich, — աղաղա-
կում է մերթ ընդ մերթ, Աջը, Կէ, Կը-
րէնի՛ Ծրայայն: Տէրը թուլակին սովորե-
ցրել է այս խօսքը եւ Աջը անունով շանն
էլ վարժեցրել է, որ երբ թուլակը Աջը,
Կրէնի՛ Ծրայայն, բացառականում է, իսկոյն
Աջըը գնում, չաքարավաճառից չաքար է
բերում եւ տալիս է եղել թուլակին: ահա
այս տնական կեանքը յիշելով խեղճ թու-
լակը շարունակ կանչում է շանը, որ շա-
քար բերէ, բայց Աջըը այնտեղ չէ:

Սրահի վերջացած ծայրում, թուլակ-
ների վանդակաշարքին մօտ հանդէս դըր-
ված են ամրապինդ եւ երկաթապատ վան-
դակների մէջ գիշատիչ թռչնոց տեսակնե-
րը: Չատ դատ վանդակների մէջ երեւում
են մեծ արծիւներ, անգղեր, բազէներ,
ցիւներ, շահէներ, ուրուրներ եւ: Ինչպէս
անասնոց արգելանոցում չորքոտանեաց թա-
գաւոր առիւծը արհամարհական մի հայ-
եացքով է նայում երկոտանի այցեւուններին,
այնպէս էլ այս օգային ինքնակալները գո-
ռոզաբար նայում են մարդկանց երեսին:
մանաւանդ «թագաւորական» կոչված մե-
ծամարմին արծիւները այնքան խորխտ եւ
հպարտ են, կարծես գիտենային, որ տիե-
զերակալ վեհապետների զինանշանները ի-
րանց պատկերներով են զարդարված: Մի
վանդակի վրա, որուն մէջ պահված է ա-
մենից մեծ արծիւը, կախուած կայ մի
տախտակ, վրան գրված է Vorsicht, Այո,
խոհեմութիւնը բոլորովին դատարկ չէ, ո-
րովհետեւ արծուի սուր եւ փայլուն աչ-
քերը սպառնում եւ զգուշութիւն են պա-
հանջում: ահազին թեւերը բաց է անում

եւ շարունակ յարձակման սպառնալիքներ
է ցոյց տալիս: մանաւանդ երախայներ տե-
սած ժամանակ թեւաւոր գազանը չէ կա-
րողանում հանդարտ կենալ: Այս խոշոր ար-
ծիւը կենդանի բռնելու համար Ալպեան
լեռանց վրա շատ են չարջարվել: Պատմում
էին նրա վանդակի առաջը թէ, մի օր յիշ-
եալ լեռանց ստորոտում մի որսորդ, կար-
ճոտն մի շան ընկերակցութեամբ կուղ կոչ-
ված հաւսեղդ մի կենդանի որսացած ժա-
մանակ, այն րոպէում որ շունը որսը բե-
րանում բռնած տիրոջը բերում է եղել,
յանկարծ մի արծիւ օդի մէջից կայծակի
նման սլանալով յարձակվել է շան վրա եւ
ճիրաններովը յափշտակել է, եւ այնպէս
շունը արծուի ճիրաններում, եւ կուղն էլ
շանը բերանում երեքն ի միասին բարձրա-
ցել են օդի մէջ: Ես այս պատմութիւնից
հետաքրքրվելով, հարցրի իմ մօտ կանգնող
մի պարոնին, թէ այդ պատմութեան հե-
րոսը նոյն իսկ հանդէս դրուած արծիւն է
թէ մի ուրիշն է: անծանօթը ինձ ասաց որ,
այո՛, մի եւ նոյն արծիւն է եղել, զոր որ-
սորդը յաջողել է մեծ դժուարութեամբ ողջ
ողջ բռնելու եւ յետոյ արծուի ժայռապատ
բռնին մէջ դնել է իր սիրելի շունը եւ
կուղին կմախքը: Թէ ի՞նչ աստիճան կարելի
է հաւատք ընծայել սա կիսագոսկոնական
արծուի պատմութեան, դա ընթերցողին
գիտնալու բանն է, իսկ ես կ'ասեմ թէ այդ
բանը պատահած ժամանակ բարեբախտա-
բար այնտեղ չէի, որովհետեւ շատ կարելի
էր արծիւը ինձ էլ հետը տանէր: Գիշակեր
թռչնոց աջ կողմում եւ թուլակների դէմ
առ դէմ հանդէս դրուած են մեծ ու փոքր
վանդակներով այլ եւ այլ տախտակի անտա-
ռային, պարտիզական, բուրաստանական,
դաշտային բնակիչք՝ ամենագեղեցիկ թռչ-
նիկներ: Սոքա իրանց հարեւան՝ գազանա-
յին թռչնոց հետ մի հակապատկեր են ներ-
կայացնում: վերջինները կարծես Սանդա-
րամետի բնակարանից փախած սատանաներ
լինեն, իսկ առաջինները եղբւական դրախ-
տից խոյս տուած ոսկեփետուր հրեշտակ-
ների ձագեր: Որքա՛ն սիրուն են: մարդ
զմայլում է տեսնելով դեղնագոյն, մոխրա-
գոյն, թխագոյն եւ սպիտակ կանարեան
թռչունները, դեղձանիկները: այնքան շուտ
շուտ թռչկոտում են, որ ժամանակ չը կայ

աւ տեսնելու . պէտք է սպասել, որ դա-
դարեն եւ կանգ առնուն ուշի ուշով դի-
տելու համար . արժէ դիտելը, որովհետեւ
հասարակ ամենօրեայ տեսնուած թռչնոց
չեն նմանում . տարօրինակ ձեւերով հե-
տաքրքրաշարժ արարածներ են : Կան գըն-
դակի նման կլորիկներ, երկայն ոտներով,
երկայն մարմնով, գանգուր մաղերով դեղ-
ձանիկներ, երգած ժամանակնին լեզունին
դուրս Կանում, եւ վզերնուն վրա մի
փոքր ուռոյց է գոյանում : Ուրիշ զանազան
երկրի զանազան տեսակ թռչնիկներ, տե-
սակները անթուելի, միմեանցից զանազա-
նելը ոչ-մասնագիտաց համար անկարելի,
հազարներով լին են, իսկ սոխակները բազ-
մատեսակ, ձայներով, գոյներով, ձեւերով
միմեանցից տարբեր, ուրիշ անթիւ հազ-
ուագիւտ թռչուններ, եկեղանիկներ, մեղ-
րածուծեր, արոքիղոսներ, ոմանք կարմրա-
գլուխ, ոմանք դեղնագլուխ, կարճ ու եր-
կար կտուցներով, շատերը ընկերութեամբ,
ոմանք առանձին վանդակներում, ոմանք
զոյգ զոյգ, անհամար եւ ազգի ազգի թե-
ւաւոր կտուցաւոր արարածներ, որոնց ա-
նունները բոլորը լատինական լեզուով մի-
մայն մասնագիտաց յայտնի թռչնագիտա-
կան բառեր են . չէ կարելի սրանց համա-
պատասխան բառերը հայերէն բառարան-
ներում գտնել . արդէն հայր էմիլեանի բա-
ռարանում ամենածանօթ թռչնոց անուն-
ները հազիւ գտնվում են, իսկ միւսների
համար « թռչուն ինչ » կը գտնէք : Չորօրի-
նակ, *Dandalus rubeculatus*, *Turraus mus-*
sicus, *Chrysomitris spinosis*, *Ligurenus*
chloris եւ, սոքա թռչնոց անուններ են,
որոնց անունները ոչ Բիւզանդացի Նորայ-
րին բառարանի մէջ կարելի է գտնել, ոչ էլ
Հայաստանցի Հինայրին :

Յիշեալ լատինական բառերով անուններ
ունեցող թռչունները համարեա ամենքն էլ
միմեանց էին նմանում . ես՝ զարմացմամբ
նայում էի այդ համբուրելի քնքուշիկ թռչ-
նիկներին . այնքան փոքրիկներ կան, որ իւ-
րաքանչիւրը մի ընկոյզի կեղեւին մէջ կա-
րելի է ամփոփել : Վանդակների ձողերին
վրայ հանգչելով տասը քսանը միմեանց կը-
պած եւ սեղմված, կամ միմեանց վրա բարձ-
րացած, հազար ու մէկ զուարճալի ձայնե-
րով խոխոխում են . այնքան կայտառ եւ

զուարթ երերումներ ունին, որ այցելու երե-
խաներին գրգռում են իրանց նման ցատ-
քըտելու :

Յուցակը ձեռքումս բռնած, վանդակ-
ների թուանշանների համաձայն թռչնոց ա-
նունները, հայրենիքները ուզում էի իմա-
նալ, ոչինչ չէի հասկանում, հարցնում էի,
բացատրութիւն էի խնդրում մի մասնագէտ
պարոնից . 78 տարեկան մի պատկառելի
ծերունի էր եւ ինքը հանդէս էր ածել ընդ-
հանուր թռչնաբանական ձուերի ահագին
մի ժողովածոյ : — « Ես ամեն օր այստեղ
եմ, նա ասաց ինձ, եթէ կամենաք եկէք
ամեն օր, ես ամենայն սիրով ձեզ, մինչ
աշխարհահանդիսի փակման օրը, բոլորը կը
բացատրեմ : Յուցակից մեծ բան չէք հաս-
կանալ » : Ննորհակալութիւն յայտնեցի պա-
րոնին ուշադրութեամբ, ցաւ յայտնելով որ
ժամանակ չունէի . ամեն օր աշխարհահան-
դէսը այցելելու : « Ահաւասիկ, տեսէ՛ք, ա-
սում էր նա ինձ, սա երկու թռչնիկները,
որ գոյներով, մեծութեամբ եւ չարժեքնե-
րով միմեանց նման լինել կը կարծուին,
բայց մեծ տարբերութիւն կայ . մինը մի
երկու վայրկեանում պոչը տասն անգամ ե-
րերցնում է, իսկ միւսը քսան անգամ . մինը
կապոյտ աչքեր ունի, իսկ միւսը վարդա-
գոյն » : Ճշմարիտ էլ այնպէս էր, բայց ան-
նշմարելի . ստեղծագործական ի՞նչ անհուն
տնօրինութիւն, ի՞նչ սքանչելի կարգա-
դրութիւն :

Սյս վանդակներից հեռի չեն երգեցիկ,
այսինքն երաժիշտ թռչունները, որոնց տե-
սակները սակաւաթիւ են . ճնճողիկների
նման գէր ու պարարտ, բոլորը մութ գոյն,
գունդ գլուխներ, ուռուցիկ կուրծքեր եւ
կարճ ոտներ, երգում են զանազան « մար-
չեր », ազգային երգեր . սրանք ծախու են,
դները տասն գուլդէնից մինչեւ երեսուն
գուլդէն, իսկ սորանց կարգում անհամեմատ
գերազանց եւ հիանալի *Scolecophagus* կոչուած
երաժշտավարժ թռչունները, մի տեսակ
կարմրասպարանոց սարեկիկներ են, եւ իշխ-
մանում են դաբուչինեան արեղայների : Կը-
ղերներին դործածած բոլորակ դտակի ձե-
ւով սեւ մի չրջանակ ունին գլուխնուն վրա,
պարանոցին մութ արիւնագոյն եկեղեցա-
կան փողակապի նման, իսկ մարմնոյ մնացորդ
մասը գաբուչինեան հոգեւորականներին

կրած թանձր բրդեղէն վերարկուի գոյնովը : Սրանք շատ թանգագին են , յիսուն գուլդէնից սկսած մինչեւ հարիւր գուլդէն : Մինը երգում է Վիէննայի վալերի թագաւոր Եօհան Սթրաուսի Տէ պլաւ-է Տօնա- վալը , միւսը Էտուարտ Սթրաուսի Բօքս-ը Բօլթա Ֆրանսէզը : Մի ուրիշը Վէրտի Ռէնէ-Կո- օպէրայի կադրիլը եւ : Իւրաքանչիւր վանդակի վրա կախուած կայ մի տախտակ , որուն վրա գրուած է թռչնոյն սովորած երաժշտական կտորը :

Սրանց յանդիման հանդէս դրուած են այլ և այլ մեծութեամբ բուերը . աւերակաց վրա ողբացող այս տխրատեսիլ թըռչունները ընկնելու են խորին մտածողութեան մէջ , կարծես չեն ախորժում այն զուարթածայն թռչնոց բանակի խղճութիւնից . իրանք որ լուծիւն , մահադուշակ հանդարտութիւն , սուգ , աւերակ և այսպիսի աղետանշան բաներ են սիրում , բոլորովին հակապատկեր մի տեսարան ներկայացնող աշխարհահանդիսին հանդիսատես լինելով , կարծես զգում են , որ սա իրանց տեղը չէ : Անշարժ մնում են յարգով լցուած անկենդան թռչնոց նման , միայն կենդանութեան նշան , մերթ քան մերթ աչքերնին ծանր ծանր բաց են անում եւ փակում . ի՞նչ աչքեր , մի մեծ դիտակի մի զոյգ փայլուն ապակիների նման : Կան նաեւ երեսներ մի տեսակ մազեղ քօղով ծածկուած դիմակաւոր բուեր , մարդ ոչ աչքերնին է տեսնում , ոչ կտուցնին . թզուկ բուեր էլ կան , շատ փոքր , բայց մեծ ու փոքր սա կենդանեաց ամենքն էլ տղեղ եւ անախորժ արարածներ են , հակակրեղի եւ զղուելի մի տալաորութիւն են անում , մանաւանդ երեսաների վրա , որոնք P foui աւելով թռչում են կղերաթռչնոց մօտ , վայս եւ սօլկա լսելու : Այստեղ իբր թէ կը վերջանայ սրահի նկարագրութիւնը , « իբր թէ » եւս ասում , որովհետեւ վերջանալու չէ , ուստի վերջացած համարելով , մոտենք որահի աջ թեւի բաժանմունքը , ուր հաւ , վառեակ , հնդկահաւ , աքաղաղ , աղաւնի , տատրակ , սագ , բադ և այլ ուտելու թռչնոց հանդիսատեղին է : Այստեղ հոտը սարսափելի է , բայց զրօսանքը այնքան մեծ եւ դուրեկան է , որ մարդ հոտը մոռանում կամ լաւ է ասել վարժվում է : Սա այնպիսի

մի տեղ է , ուր մարդ տուաւ տը երբ է լինում , բնաւ չէ կարող իմանալ երաժշտական բոլոր ձայների դաշնակներով անընդհատ « քիբերիքի » աղաղակներ , հաւերի կըռթ-կըռթներ , բադերի վագվագներ , հնդկահաւերի կուլուք-կուլուքները ականջներ են խլացնում : Ի՞նչ տեսակ զարմանալի հաւեր , ի՞նչ աքաղաղներ , նմանները ոչ զիւղատնտեսական ագարակներում տեսնուած են , ոչ տներում եւ ոչ մի տեղ հաւեր կէս մետր բարձրութեամբ : Զօրապետների հանդիսաւոր օրերում գլուխնուն վրա ծածկած ուռնիի տերեւների ձեւով լիետուրաւոր սաղաւարտների նման հաւերի եւ աքաղաղների գլուխները ծածկուել են երկայնաձիգ գոյնզգոյն փետուրներով , ամենքը տարօրինակ , հասարակ ոչինչ չկայ : Վառեակի չափ փոքր , բայց չափահաս աքաղաղ , աքաղաղի մանրանկար , կատարեալ գոռոզութեամբ վեր առնելով մեծ աքաղաղի նման « Գիբերիքի » է աղաղակում , բայց ձայնը բարակ , հազիւ լսվում է միւս բամբ ձայնով որոտացող հազդին աքաղաղների ձայների մէջ : Սրանց մեծագոյն մասը ստացած է առաջին աստիճանի ոսկի մրցանակ : Ոսկի մրցանակ ստացող աղաւնիներ եւս կան , որոնք լաւ վարժուած թղթատարներ են , Վիէննայից Գրաց , Լէմբերկ և այլ տեղեր նամակներ են տանում :

Սրահի ձախ կողմի թեւը պարունակում է համաշխարհային ամեն տեսակ թռչնոց չորացած եւ յարգիւ լցուած մարմինները , իսկ շատ մեծերին , զոր օրինակ , ջայլամներին , ամենամեծ ծովային եւ ցամաքային արագիւնների կմախքները միայն հանդէս դըրուած են , նմանապէս ամեն տեսակ թռչնոց ձուերի ժողովածոյքը : Սա բաժանմունքը աւելի գիտնական եւ ուսումնական ձևերն է . նկատելի են ջայլամների ձուերը իրանց խոչորութեամբ , ապակեպատ արկղերի մէջ շարուած են աստիճանաբար միմեանցից մեծ գոյնաւոր ուրիշ բազմաթիւ ձուեր , որոնց մօտ դրուած է իւրաքանչիւրին տէրը , այսինքն նոյն ձուն ածող թռչունը :

Այցելուաց ամենքին հետաքրքիր ուշադրութիւնը գրաւում է հազդին մեծութեամբ հսկայ եւ վիթխարի մի ձուի տեսքը : Պղնձեայ կիսաբողբոյս կոթողներով բըռ-

նուած մի պատուանդանի վրա զետեղուած էր այս տարօրինակ խոշոր հաւկիթը, որուն կպած տպագրեալ յայտագրից կարդացվում էր, որ այս ձուն գտնուել է Ափրիկայի Մադագասկար կղզւոյն հարաւային ափերում, 280 անգամ հասարակ հաւու ձուից և 50,000 անգամ մեղրածուծ թռչնոյն ձուիցը մեծ. մէջը կարելի է ամփոփել 7 լիտր ջուր Բայց թէ ի՞նչ տեսակ թեւաւոր մի դաղանի ձու է, ո՞վ է ածել, դա անյայտ է մնացել: Մասնագէտը ասում էին, որ ջայլամի ամենամեծ տեսակն անգամ չէ կարող այնքան մեծ ձու ածել: Այդքան սարսափելի մի ձու դուրս հանելու համար պէտք եղած աեղին մեծութեան չափիցը համեմատելով առասպելական թեւաւոր մի վիշապ երեւակայել հարկ է լինում:

Թէ մեծ սրահին եւ թէ աջ ու ձախ թեւերի հանդիսատեղիներից զատ պատշաճաւոր անկիւններում և բայց մնացած տեղերում հանդէպ դրուած կան ցորենական արմտեաց անթիւ մի աղխամախ, հանդերձ տպագրեալ ծանօթութեամբ, որը ծառայում են թռչունները կերակրելու եղանակին: Նաեւ Վիէնայի առաջնակարգ գինադործների գործարաններից դուրս եկած մեծագին թռչնորսական հրացաններ, եւ թութակների, դեղձանիկների, սարեկիկների և այլ թռչնոց համար ոսկեզօծ, արծաթազօծ վանդակներ, թռչուն որսալու դաւաններ, որոգայթներ, ուռկաններ, վերջապէս, աշխարհիս վրա թռչունների վերաբերեալ որքան կարելի է երեւակայել, ամենքն էլ հանդէս դրուած, հետաքրքրաց փափագը լիովին յագեցնելու համար:

Կայսրը եւ կայսերազուն ընտանեաց բոլոր անդամները այցելեցին աշխարհահանդէսը, ամենքը վերին աստիճանի գոհունակութիւն յայտնելով, մանաւանդ կայսրը որ ասած է աշխարհահանդիսի մասնաժողովի նախագահին. «Շատ կը ցաւիմ, որ զաւակս, թագաժառանգ իշխանը, տկարութեան պատճառաւ, օդավոխութեան զնացած է, ո՞րչափի նա ուրախ պիտի լինէր այսքան բազմաթիւ հետաքրքրական առարկաների միագումար հանդիսից»: Արդարեւ այնպէս էլ է. թագաժառանգ Բուդոլֆ իշխանը բարձր ուսում առած եւ ամեն գիտութեանց նախանձախնդիր եւ հե-

տաջօտ ուսումնական մի անձնաւորութիւն է, իրաւագիտական եւ փիլիսոփայական վարդապետութեանց համար խոտաւահանջ քննութիւններ տալով, վիպագիրներ ստացած է, շատ հեղինակութիւններ գրած ունի, վերջերում «Ճանապարհորդութիւն յԱրեւել» գնահատելի գործը հրատարակած էր, այժմ էլ կրկին իւր հեղինակութեամբ «Աւստրիա խօսքով եւ պատկերով» բազմահոշակ հանդիսի հատորները ի լոյս են ընծայվում:

Նամակս կը վերջացնեմ աւելացնելով մի բանի տող: Լուսաւորեալ Եւրօպան, ինչպէս ամենքին յայտնի է, մեծ յուսադրութեամբ աշխատում է օդապարիկով ճանապարհորդելու հարցը վերջնականապէս վրձնելու: Օդի մէջ դէկ գործածելով օդապարիկը վարելու մէջն է ամենակարեւոր կէտը, զուցէ քսաներորդ դարը կամ աւելի վաղ տեսնէ այս կատարելագործութիւնը, բայց երկոտանի մարդը՝ նախանձի եւ անհամբերութեան կիրքը չէ կարողանում զրուպել, երբ տեսնում է որ արծիւը օդի միջից թեւատարած սլանալով հազարաւոր քիլօմետր հեռաւորութեամբ անջրպետներ կտրում անցնում է, հետեւաբար մարդը, որ ընդհանուր անասնոց գերադրական տէր եւ էական է, ինքն էլ ցանկանում է թռչիլ փոխանակ նաւերով ջրի վրա եւ երկաթուղիներով ցամաքի վրա կրօայի նման քայլեր անելու:

Թռչնոց նման թռչելու համար թեւեր հնարելու աշխատասիրողներ շատ են եղած, ոչ թէ կիսակատար, այլ քառակատար անգամ չեն յաջողված, շատերը զոհ են գնացած, բայց չեն յուսահատուած, այժմ էլ մուլեգին հալածում են: Վերջ ի վերջոյ ապագայ դարերի սերունդը թերեւս փառաւորապէս կը բարձրանան օդի մէջ, և այն ժամանակ օդային թռչունները կ'ունենան իրանց նախանձընդէմ արուեստական թեւաւոր ընկերակիցները:

(ՄՇԱԿ)

ԿԸՌՕ

Տ Ե Ղ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

ԱՂՋՆԵԱԳ ՆԱՀԱՆԳԻՆ ՎՐԱՑ

Հին Հայաստանի կարի նուազ ծանօթ նահանգներէն մին է Աղձնիք որուն ճիշդ սահմաններն կարելի չէ գծել։ Ստոյգն այսքան է թէ սահմանակից էր Մոկաց, Տարուբերանի եւ Դ. Հայոց նահանգներուն՝ Հայաստանի կողմէն եւ Ասորեստանի կամ Միջագետաց՝ արտասահման կողմէն։ Այս վերջին պատճառաւ Կղզն Ասորեստանի եւս կոչուած է շատ անգամ, եւ խիստ կանուխ ելած է Հայ թագաւորաց ձեռքէն՝ Արշակունեաց տկարանալ սկսած ատենն իսկ, այսինքն Մեծին Տրդատայ մահուանէն աւելի միջագետք եւ Խոսրովի օրով եւ Բակուր բղեչխին ձեռքով։ Կարեւոր եւ շատ երեւելի նախարարութիւն մ'էր Աղձնեաց բղեչխութիւնն որուն նախապետը ունէր ոչ միայն կուսակալ, սահմանակալ տիրոջներն՝ իբրեւ ոսկանապալ աշխարհին հաւաքային կողմէն, այլ եւ Աղձնեաց բղեչխն էր մին այն ութ երեւելի իշխաններէն որք Տրդատայ օրով համրուած չորս հարիւր նախարարաց մէջ բարձրագոյն աթոռ ունէին, եւ թերեւս անոնցմէ գերագոյնն էր, զի կը կոչուէր Գահերէց կամ Բարձրէց արքայի որ Գահին Գուցէ վայելած այսքան մեծ փառք ու պատիւներն շփացուցին Ասորեստանի սահմանապալ նախարարներն որ ամենէն առաջ Արշակունեաց միապետութեան լուծը թօթափելու ելան ուրիշ մի քանի նոյնքան ամբարտաւան նախարարաց հետ, եւ արդէն Բիւզանդարանին մէջ «Թագաւոր» եւս կոչուած են իրենց ապստամբութենէն ոչ շատ ետքը։ Բայց ազգային մեծ մարմնոյն միութենէն բաժնուելով՝ չը կրցան երկար վայելել անկախութիւնը, զի նուաճուեցան շուտով օտար լուծի ներքեւ, Պարսից, որք խորամանկ քաղաքականութեամբ Արշակունի պետութիւնը տկարացնելու համար՝ նախ նախարարներն կը բաժնէին անկէ, ապա առաջին որս զնոյն ապստամբներ կ'ընէին։ Եւ ցաւալի էր շատ, զի աւատա-

կան Հայ նախարարութիւնը այդքան բացայայտ որոգայթէ չէին զգուշանար։

Աղձնիք ըստ հին բաժանման տասն գաւառ ունէր, բայց նոցա տեղերն եւ սահմաններն իսպառ չփոթած են մերձակից նահանգներուն հետ։ Ամէն անստուգութեամբ հանդերձ, անտարակուսելի էր որ կը գրաւէր Աղձնեաց նահանգն այն աշխարհներ որք այժմ կը կաղմեն Տիարալքիւրի եւ Պիթլիսու կուսակալութիւններն՝ ոչ ամբողջապէս անշուշտ։ զի Մոկք, Տարուբերան, Վասպուրական, Կորճայք եւ Դ. Հայք նահանգներն եւս յաւէտ կամ նուաղ մասեր ունին յիշեալ երկու կուսակալութեանց արդի կազմակերպութեան մէջ։ Տիգրիս գետն իւր բազմաթիւ ճիւղերով կը ժողվէր գլխաւորապէս Աղձնեաց երկրին ջուրերը, ուրեք ուրեք նորա միջնաշխարհէն եւ տեղ տեղ ալ սահմաններէն աւելնելով եւ վերջին պարագային մէջ զինքը Միջագետքէն բաժնելով։

Նախնի տասն գաւառներէն նշանաւորն էին Արզն կամ Արձն կամ Աղձն՝ յորմէ ելած է նոյն իսկ Արշիւտ անունը, Սերխեթ կամ Խերհեթը, Սալնոյ Ձոր եւ Սասուն։ մնացեալ վեցն՝ անկարեւոր եւ առաւել եւս անծանօթ են։ Առաջին գաւառն ուր բնակած կ'երեւի ասորեստանական գաղթականութիւն մը՝ կոչուելով յանուն գաւառին Արզունիք, որ ապա կոչեցան Արծրունիք եւ փոխադրուեցան ի Վասպուրական, աղօտ իմն պահած է իւր անունը, զի Արշիւտ կամ Խարզան կը յորջորդուի այժմ իսկ եւ է յատուկ Գաւառութիւն մը, կեդրոնանիստ ունենալով Զոփէյի գիւղը։ Այս գաւառին մէջէն կ'անցնի Արշիւտ անունով վտակ մը զոր տեղացիք իսկ Արշիւտ այլ կը կոչեն։ Երկրորդ գաւառն, այսինքն Սերխեթը, այժմու Սղերդն է անտարակոյս։ Սասուն գաւառն նոյնութեամբ կը պահէ իւր անունը։ Իսկ Սալնոյ Ձորն Բաղէշ կոչուած է սովորաբար։ Եւ Բաղէշն անտարակոյս մասն էր Աղձնեաց, զի Սերխեթ եւ Տաթիկ գաւառաց մէջ կ'իյնայ, եւ գիտենք որ ինչպէս առաջինն, նոյնպէս եւ վերջինն նորա գաւառներէն է՝ որ նեղ ու բարակ տարածութեամբ մը երկընցած է մինչ Վանայ ծովուն եզրը, ունենալով Դատուան նաւահանգիստն որ սակայն Աղձնեաց ազգային միութենէն բա-

ժանման ատենէն սկսեալ առնուած կ'երեւի նոցա ձեռքէն եւ կցուած Բղնունեաց դաւառին կամ խլաթայ :

Աղձնեաց նահանգին մէջ ի հնունմ յիշուած կան տեղեր որոց գաւառքն յայտնի չեն ամենեւին՝ ո՛չ միայն այժմ, այլ եւ հին ատենը . օրինակ, Տիգրանակերտի կամ Ամիթի պէս մեծահոջակ քաղաք մը յայտնի չէ թէ տաս գաւառներէն որո՞ւն մէջ էր եւ Կեթիկ գաւառին մէջ կարծուին ենթադրութիւն մ'է լսկ : Նոյնպէս ծանօթ չեն Բառաջը աւանին . Կոտու բերդաւոր գիւղին — սրոյ հին ամրոցի մը բարերէն Գագիկ Ա. Արծրունեաց թագաւորն կառուցած է Աղթամարայ տաճարն ու եկեղեցին — եւ Սեղմ բերդին տեղերը եւ : Վերջին անունովը Վանայ ծովուն եզերքը գիւղ մը կայ թէպէտ՝ այժմ քրդաբնակ, բայց չը կրնար ճշդուիլ թէ Աղձնեաց ո՞ր գաւառին կրնայ վերաբերիլ, եւ ո՛չ ալ թէ նոյն է ընդ հին Սեղմ բերդին : Մինչեւ իսկ տարակոյս ծագած է երբեմն Մարտիրոսաց քաղաքին կամ Նփրկերտի տեղւոյն վրայ թէ արդեօք Աղձնեաց կամ Դ. Հայոց՝ որ նոյն է՝ Ծովաց կը վերաբերէր : Մուֆարդին անունով փոքր գիւղաքաղաք մը պահած է թէն այդ հռչակաւոր քաղաքին հետքը, բայց խնդիր է թէ ճիշդ որ նահանգին մէջ պէտք է դնել զայն : Այժմ Տէրապետի կուսակալութեան ներքեւ Բայազետութիւն է, որ կրնայ ենթադրուիլ իբր տեղի Աղձնեաց Նփրկերտ գաւառին, եւ թերեւս տարբեր է բոլորովին Նփրկերտ քաղաքն Մարտիրոսաց քաղաքէն՝ որ Միջին դարուն Մուֆարդին կը կոչուէր յայտնապէս : Այս ենթադրութեամբն հանդերձ Աղձնեաց տաս գաւառներէն հինգն դեռ անծանօթ կը մնան :

Ընդ մէջ Աղերդի Բեւեալբերդութեան եւ Խարղանի Բայազետութեան՝ կը գտնուի Ռընտուան գիւղաքաղաք մ'ալ՝ կեդրոնանիստ համանուն կուսակալութեան, բայց ծանօթ չէ թէ նախնի ո՞ր գաւառին կը համեմատի : Ռնտուան անունն Հրանտաւան անունն աղաւղում կ'երեւի, առանց ո՞ր Հրանտի դաստակերտ լինելն յայտնի լինելու : Իսկ Քրդերէն Ռնտեւան կը նշանակէ Գեղեցիկ ե հոս կամ Գեղեցիկս են հոս : Գուցէ՛ այդպիսի նշանակութիւն մը միայն ունի եւ Հրանտի մը դրոշմ չունի ալ :

Խարղան կամ Արղան Բայազետութեան մէջ, վերոյիշեալ Արղն վտակին եզերքը, Տիարպէթիէն իբր 4 աւուր ճանապարհ հեռու ընդ հիւսիսային արեւելս կը գտնուի աւերակ եւ անբնակ քաղաք մը յոյժ ընդարձակ եւ մեծատարած, որուն պարիսպներն եւ հասարակաց ու մասնաւոր շինութեանց հետքերն բաւական յայտնի կ'երեւին . զի ոմանք կ'իսաքանդ են միայն, ոմանք գետին տապալելով հանդերձ ինչ շքեղութեանց բեկոր լինելն յայտնի կ'ընեն : Նոյն կողմի Հայերն Արղնայ քաղաք կը ցոյցեն զայն . իսկ Քրդեր եւ Թուրքեր՝ Խարաղ կամ Էթի Տէրապետի : Եթէ՛ չկրնայ հաստատուիլ որ Աղձնեաց առաջին գաւառն, Արղն, ունեցեր է համանուն ճոխ եւ մեծափարթամ քաղաք մը, որպէս լինել կը ցուցնէ այժմու նոյն աւերեալ չհաստատան, հաւանական կը լինի այնուհետեւ կարծիքն թէ նախնի Տիգրանակերտ քաղաքն տարբեր է արդի Տիարպէթիէն, ինչպէս կը պնդեն շատ կարեւոր հնախօսք եւ հետեւապէս Տիգրիսի օժանդակ Արղն վտակի նախկին դշտոյն, իլատակեալ հէք քաղաքն է՝ նոյն իսկ նախկին Տիգրանակերտն . տեղացի այլապէսներն ալ ոչ մտացածին այլ աւանդական պատճառներ ունին հարկաւ այդպէս ճանչնալու : Այդ ողբացեալ քաղաքին լայնատարած դիրքն ու մեծութեան եւ ճախութեան նշխարքն կը հաստատեն արդարեւ իւր նախնի փարթամութիւնն եւ շքեղութիւնն, որպէս ունեցած է հարկաւ Տիգրան Երուանդեանի դաստակերտն եւ Տիգրանուհի բամբիլին արժանաւայել գրգարանն : Սակայն, ինչպէս որ վճռակի չենք գիտեր Արղն քաղաքի մը գոյութիւնը, նոյնպէս անպայման չենք կրնար դիւրաւ հաւատալ Տիարպէթիի եւ Տիգրանակերտի տարբերութեան, եւ սորա հիմնարկութեան մեծաշուք փառքն չենք ցանկար այսքան դիւրագնի ի բաց առնուլ Մեծին Կիւրոսի համհարզ մեր մեծահոջակ Տիգրան Ա. թագաւորէն : Եւ կը սպասենք դեռ սուրբագոյն տեղեկութեանց ու փաստերու ճանչնալու համար այդպիսի անփառունակ մի ճշմարտութիւն : Եւ ո՞վ գիտէ թէ նոյն աւերեալ քաղաքն ո՞ր ժամանակի, ո՞ր դարու, ո՞ր աղբի կը պատկանի, քանի որ գիր եւ արձանագրութիւն չունի բնաւ եւ ո՛չ

եկեղեցւոյ կամ մզկիթի հետք: Ժամանակն եւ խնամոտ զննութիւն մը թերեւս ի լոյս բերէ այս աղօտ կէտերը, որուն պիտի աշխատինք մեք ալ՝ պատեհ առթիւ մը այդ կողմեր հանդիպած ատեն՝ մասնաւոր խուզարկութեամբ:

Եթէ ի հնումն Աղձնիք ունէր օտար անուն մը — Կողմն Ասորեստանի —, այժմ եւս ոչինչ նուազ օտարախառն անուն մը ստացած է, այն է՝ Քրդահայաստան. զի իւր բովանդակ տարածութեան մէջ քուրդ տարրին կը վերաբերի մեծամասնութիւնն եւ կը տիրէ գլխաւորապէս նոցա սովորութիւն, լեզուն, տարազն ու կրօնը՝ մահմետականութիւն: Ասիական Թուրքիոյ կուսակալութեանց քիչերն Տիարպէթի կուսակալութեան նման բազմախառն ժողովուրդ, տարբեր կրօնք եւ տարբեր լեզու կը պարունակեն, ինչպէս յայտնած եմ արդէն «Տիգրանակերտ» ի տեղագրութեան մէջ՝ տպեալ ի Մարտի 1885 ամին: Այս ալազան խառնակութիւնն առաջ եկած է անշուշտ այն բազմաթիւ եւ բազմազան արշաւանքներէն որոց ենթարկուած է այս նահանգն. զի ամէն արշաւանք թողած են իրենց հետքն յաւէտ կամ նուազ, սկսեալ Ասորեստանէն այց կամ Քաղդէացւոց ժամանակէն մինչեւ Օսմանեան վերկարար տիրապետութիւնն, որ իւր միահեծան թեւին ներքեւ պարփակեց այս կողմերն՝ վերջ տալով միանգամ ընդ միշտ իրարմէ մերթ նուաճեալ փոքրիկ բռնաւորներու, Ամիրաներու, Սուլթաններու, Խաներու, Պէյերու եւ այլ չը գիտեմ ի՞նչ անուն ունեցող տիրապետներու որք մէյուկէլ Գաւառի կամ քաղաքի տէր լինելով՝ անգաղար կռիւներ ունէին ընդ միմեանս, անվերջանալի աղէտ պատճառելով հպատակներուն. բազմապետութիւն մը՝ որ հեղեղանման արշաւող եւ շուտով անհետացող մի քանի նշանաւոր աշխարհակալներէ աւելի պատուհաս էր ժողովրդոց եւ երկրին:

Քրդահայաստանի այս կողմերը կը տեսնուին հայ, թուրք, արաբ, քուրդ, ասորի, եզլիտի, քաղդէացի եւ հրեայ ժողովուրդներ: Նոյնքան լեզուներ ալ չենք կըրնար թուել սակայն. զի կամ արաբերէն կամ քրդերէնն է տիրող լեզուն, աւելի վերջինն. ասորերէնն Ասորիք դուն ուրեք գի-

տեն. իսկ քաղդէարէն չեն խօսիր Քաղդէացիներն: Սակայն կրօնից թիւն շատ աւելի է քան ազգաց թիւն. զի մահմետականութիւնն եւ քրիստոնէութիւնն ունին յոյժ բազմաթիւ ստորաբաժանումներ, եւ Եզլիտիքն երկուքն ալ զուրկ ժողովուրդ մ'են անգիր, անլեզու, եւ ընդհանրապէս կը կարծուի թէ դիւապաշտ են: Թէպէտ իրենք չեն խոստովանիր, բայց սաստիկ կը բարկանան եթէ լսեն հայհոյութիւն սատանայի վրայ. հետաքրքրական է նոցա մէկ անապաշտութիւնն ալ որով, եթէ իրենց բոլորտիքը գիծ մը քաշուի հողին վրայ, չեն համարձակիր դուրս ելնել նոյն շրջագծէն, մինչեւ որ քաշուին չ'եղծէ դարձեալ: Արդեօք Անտիոքոս Եպիփանն ալ Եզլիտներու կրօնն ունէր, որ չը համարձակեցաւ հռոմայեցի պրետորին քաշած շրջագծէն դուրս ելնել առանց խոստանալու թողուլ զԵգիպտոս որուն փոքր միւս եւս տիրած էր՝ եթէ չը լքանէր:

Աղձնեաց նահանգն բաւական ընդհարաւ եւ դիրքով ցած լինելով՝ ընդհանրապէս անառողջ կլիմայ ունի, եւ է խիստ ջերմին եւ նուազ ջրաւէտ: Պաղ ջուր բնաւ չը կայ. սակայն կը հասուցանէ այնպիսի պտուղներ եւ բերքեր որք անծանօթ են ի Վասպուրական, ի Տուրուբերան, ի Սիւնիս եւ միւս բարձր նահանգաց մէջ: Կը հասնին աստ թուղ եւ նուռն եւ ուրիշ ինչ որ սոցա հաւասար ջերմութիւն կը պահանջէ: Զմեռը գրեթէ անծանօթ է այս կողմերը: Սղերդ եւ Բաղէշ 16 հազարամետր հազիւ հեռի են ի միմեանց, բայց կը ներկայեն ի ձմերան բոլորովին հակապատկեր եղանակներ. առաջնոյն մէջ ձիւնն հազուադէպ կը լինի տեսնել, մինչ վերջինն գրեթէ վեց ամիս կը հեծէ ցրտութեան եւ ձեան կուտակաց ներքեւ:

Երկրին մակերեւոյթն մեծագոյն մասամբ դաշտային է, բաց ի Սասուն գաւառէն որ Սիւլ լեռանց մէջ կը գտնուի ամբողջովին՝ լինելով իսպառ անհարթ եւ խորտուբորտ. հարթայատակ է Սղերդէն մինչեւ Տիարպէթի: Իսկ վերջնոյ չրջակայքը անծայրածիր ընդարձակութեամբ տափաստան մը կը տարածուի՝ զուրկ ի ծառոց եւ ի տնկոց՝ առ ի չգոյէ ջրոց. պտղատու ծածեր ովասիսներու կամ լեռանց առ ի կողեր

եւ ձորերու մէջեր եւ եթ կը գտնուին : Ամառը խիստ անհանդուրժելի է ճանապարհորդութիւնն այս երկիրներու կիզիչ արեւուն տակ եւ անդեմիւռ օդին մէջ , որուն վրայ երբ աւելցնեմք յիշել թէ թուանաւոր զանազան սողուններ եւ կարիճներ ալ անսովոր բազմութեամբ երեւան կուգան այն եղանակին , պէտք եղածէն ոչ պակաս գողափար ընծայած կը լինինք Աղձնեաց ամարան դաժանութեան վրայ :

Մեծագործութեան արդիւնք կարեւոր հնութիւններ ալ չ'են պակսիր այն երկիրներուն մէջ , որոց ի՞նչ դարու կամ ի՞նչ ազգի պատկանիլը յայտնի չ'է : Սղերդէն երկու ժամ հեռի լեռանցամէջ էջ մը կայ հարիւր աստիճանէ աւելի արուեստական սանդուղով քարակերտեալ . մի այլ տեղ ժայռեր կոփուած եւ ներքնափոր սենեակներ շինուած են յօթեւան ուղեւորաց . ուրեք ուրեք ընդլայնուած են լեռանցամէջ նեղ անցքեր , եւ Բաղէշէ երկու ժամ հեռի գտնուած Ծախ-Կառն ալ լեռան մը տակէ բացուած արուեստական կիրճ մ'է :

Կը գրենք հետզհետէ Աղձնեաց կարեւոր տեղերուն վրայ ուրոյն ուրոյն :

Մուշ, 1886

ՄԱՐԿՈՍ ՆԱԹԱՆԵԱՆ

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՌԱՋԱՐԿԵԱԼ ԽՆԴԻՐԻ

Թիի 21. (Մասիւ թիւ 3814)

» 23. » » 3815)

» 24. » » 3816)

» 25. » » 3817)

ԽՆԴԻՐ

Թիի 26.

Լուծել հետեւեալ հաւասարութեանց դրուածիւնը .

$$+^2 + \frac{1}{+^2} = +^2$$

$$+ \frac{1}{+} = +^2$$

ԽՆԴԻՐ ԹԻԻ 22

ԼՈՒԾՈՒՄՆ

$$\Phi \text{ ————— } , \text{ ————— } , \text{ ————— } , \text{ ————— } \Psi$$

Յնթադրենք թէ Ա եւ Բ երկու լուսաւոր կէտեր են Փ Ք գծին վրայ : Այս երկու լոյսերու շրջագարձ զօրութիւնը , այսինքն հեռաւորութեան միութեան զրկուած լուսոյ քանակութիւնը են ∞ եւ Φ :

Հ կոչենք Ա եւ Բ կէտերուն եւ $+$ խնդրուած Մ կէտին առ Ա ունեցած հեռաւորութիւնը :

Գիտենք թէ որ եւ է կէտի մը ստացած լուսոյ քանակութիւնը խտորնակ համեմատական է լուսաւոր կէտէն ունեցած հեռաւորութեան քառակուսւոյն . ուրեմն Մ կէտը , Ա կէտին վրայ գտնուած լոյսէն պիտի ընդունի $\frac{\infty}{+^2}$ եւ Բ լոյսէն $\frac{\Phi}{(+-)^2}$ քանակութիւն մը :

Որով առաջարկեալ խնդրոյն հաւասարութիւնը կը լինի .

$$\frac{\infty}{+^2} = \frac{\Phi}{(+-)^2}$$

յորմէ հետզհետէ .

$$\frac{\sqrt{\infty}}{+} = \frac{\pm \sqrt{\Phi}}{+-}$$

$$\pm \sqrt{\infty} - + \sqrt{\infty} = \pm + \sqrt{\Phi}$$

$$+ = \frac{\pm \sqrt{\infty}}{\sqrt{\infty} \pm \sqrt{\Phi}}$$

եւ երկու արմատները վատելով ,

$$+ = \frac{\pm \sqrt{\infty}}{\sqrt{\infty} + \sqrt{\Phi}}$$

$$+ = \frac{\pm \sqrt{\infty}}{\sqrt{\infty} - \sqrt{\Phi}}$$

Երեք ենթադրութիւնք կարելի են Ա եւ Բ լուսոց զօրութեանց վրայ .

∞) Φ , ∞ (Φ եւ $\infty = \Phi$:

Դիւրին է տեսնել թէ առաջին դիպուածին մէջ երկու արմատներն ալ դրական են , մին $+$ կը ներկայացնէ կէտ մը երկու լուսոց մէջ տեղ , միւսն $+$, տկարագոյն լոյսէն անդին :

Երկրորդ դիպուածին մէջ, առաջին արմատը +, դրական է իսկ երկրորդը բացասական. առաջինը կ'ենթադրէ երկու լուսոյ միջին Մ կէտ մը, իսկ երկրորդը արտաքին կէտ մը որ Ս կէտին ձախ կողմը կը գտնուի:

Երրորդ դիպուածին մէջ + հաւասար կը լինի $\frac{f}{2}$ ի իսկ +, $\frac{f}{0}$ ձեւը կ'առնու. Ըսել կ'ըլլայ թէ միակ կէտ մը կայ որ հաւասարապէս լուսաւորեալ է եւ այս կէտը կը գտնուի Ա եւ Բ կէտերուն միջին կէտին վրայ, ինչ որ դիւրին էր մակաբերել. Գալով + ի արժէքին, կրնանք ըսել թէ Ա կէտէն յանհունա հեռաւոր կէտ մ'ալ կայ, ըստ որում քի արժէքն ա է տարբեր համարելով թէ որ ենթադրենք թէ ա ի կը մերձենայ հետզհետէ, + ի արժէքները երթալով կը մեծնան ինչ որ կը ցուցնէ թէ խնդրոյ երկրորդ պատասխանն եղող կէտը յանհունա կը հեռանայ Ա կէտէն, մինչ քի կը ձգտի հաւասարիլ ա ի:

ԱՆՈՒԱՆՔ ԼՈՒԾՈՂԱՅ

Օր. Մ. Զօհրայ, Գատը-գիւղ
Տ. Բարսեղ Մ. Մկրտչեան, Աշակ. Ղալա-
թիոյ վրժերնի.
Տ. Կ. Նաւասարդեան, Իզմիր

Տ. Պ. Սրապեան. Սղերգ. — 20 դ խնդրոյ լուծմանդ ուղիդ է:

Տ. Դ. Ռշտունի, աշակ. Հ. Մ. Ը. Մշոյ վարժարանին — Նշնպէս:

Տ. Կ. Ղազար, աշակ. Հ. Մ. Ը. Մշոյ վարժարանին — Նշնպէս:

Տ. Կ. Նաւասարդեան. Իզմիր. — 20 դ խնդրոյ լուծման մէջ ըսուած է թէ ք շիշեռու թիւն է եւ ք² կը ներկայացնէ դումարը. իսկ ք = 36 պարզապէս տպագրական սխալ մ'է որ պիտի ըլլայ ք = 6: — Արդէն դիւրին էր գուշակել քանի որ պատասխանը ճիշդ է:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

18 Ապրիլ 1886

Զատկական տօներուն առթիւ պաշտօնական այցելութիւնը եւ շնորհաւորութիւնը բնականաբար գրաւեցին շաբաթն, ուստի և պէտք չէ սպասել ազգային կարեւոր լրոյ:

Սովորական այցելութիւնը փոխանակուեցան մեր եւ Հռոմէական Հայոց, Յունաց եւ Պուլկարաց Պատրիարքարաններուն միջեւ, Գեր. Փոխանորդ. Հօր եւ յատուկ պատգամաւորութեանց միջոցաւ:

Կիրակի առաւօտ, Ս. Պատրիարք Հայրը Մայր Եկեղեցւոյ մէջ հանդիսաւորապէս պատարագելէ յետոյ, միջօրէին Պատրիարքարանի մեծ դահլճին մէջ ընդունեց: Ազգային Երեսփոխանաց, Վարչութեան եւ զանազան Խորհրդոց ներկայացուցիչներն որք շնորհաւորեցին Ս. Յարութեան տօնն եւ Ն. Սրբազնութեան անուան տարեդարձն: Այս առթիւ, Ազգ. Ժողովոյ Ատենայետ Վսեմ. Տիգրան էֆէնտի Եռսուֆեան իւր ծանօթ պերճախօսութեամբ՝ ատենաբանութիւն մը ըրաւ, յորում համառօտակի յիշելէ յետոյ Տ. Յարութիւն Պատրիարքի մետասանամսեայ պաշտօնավարութեան միջոցին Ազգն զբաղեցնող երկու կարեւոր խնդրոց՝ այն է Ընդհանրական Կաթողիկոսութեան եւ Սրբազնութեան Պարտուց բարձման խնդրոց կարգադրութեան մէջ մտած լինիլն, յոյս եւ վստահութիւն յայտնեց թէ շնորհիւ Ն. Սրբազնութեան եւ Բաղաւական Ժողովոյ գործունէութեան ու նախանձախնդրութեան, եւ կառավարական ատենից արդարաւատութեան՝ գոհացուցիչ լուծման մը պիտի յանգի Ս. Յակոբայ վանուց հողային ծանուցեալ դատն (*):

(*) Աստի դէպ է յիշել, թէ եւ քիչ մը առաջ, թէ Բարձր. Մեծ-Եպարքոսն ըստ խնդրանաց Ս. Պատրիարք Հօր եւ ըստ որդման Դատական Նախարարութեան, Պետական Խորհրդոյ յանձնած է ըննել եւ վճռել

Վսեմ: Ատենապետն ջերմ բարեմաղթու-
թիւններ ըրաւ վստն բարօրութեան եւ կե-
նաց Վեհ: Սուլթանին եւ Ս. Պատրիարքին
եւ իւր ատենաբանութիւն ընդունուեցաւ
ներկայից բուռն ծափահարութեամբք:

Ս. Պատրիարք Հայրը շնորհակալութիւն
յայտնելով իրեն նկատմամբ արտայայտուած
վստահութեան եւ համակրանաց համար,
պատասխանեց թէ յոյս մեծ ունի որ շնոր-
հիւ Օգոստ. կայսեր եւ Բ. Դրան նախա-
բարաց արդարադատութեան եւ հոգածու-
թեան, արդարութիւնն իւր տեղը գտնէ
ժանուցեալ դատին մէջ: Ն. Սրբազնութիւն
գովեց ապա Աղգային Վարչութեան եւ Ե-
րեսփոխանութեան ջանքերն եւ օրհնեց Աղ-
գին բոլոր աշխատաւորներն:

Զատիկի տօնին առթիւ Պատրիարքարան
այցելող օտար հիւրերուն մէջ յիշատակու-
թեան արժանի է խալկական դեսպանն՝ Պա-
ռոն Կալվանիա որ առաջին անգամ տե-
սակցեցաւ Ս. Պատրիարք Հօր հետ:

Պուկարաց Գեր. Էկզարքն հինգ շաբթի
օրն անձամբ այցելեց յԱղգ. Պատրիարքարան
և ապա Մայր. Եկեղեցի իջնելով աղօթեց,
ինչպէս ըրին նաև Յունաց Պատրիարքարանի
պատգամաւորը, ըստ սովորութեան:

* *

Ներքին լրոց մէջ հանրային և արտաքին
ուշադրութիւնը կդրադեցնեն միշտ Պալքան-
եան խնդիրը:

Աթէնքէ առնուած լուրերը բաւական
յուսադրական են և խաղաղութեան պահ-
պանման նպաստաւոր: Ըսենք սակայն որ
եթէ ապահովուի այդ պահպանումն, անոր
սա խնդիր, թէ Կարկուր էֆէնտիի ձեռքը
գտնուած վճռագիրն Եսայի Պատրիարքի
անձին դէմ ձեռք բերուած լինելուն պատ-
ճառաւ, Ն. Սրբազնութեան մահուամբ այդ
վճռագիր իւր ոյժը չէ՞ կորուսած միթէ եւ
Կարկուր էֆէնտի պարտաւոր չէ՞, եթէ
խնդիր մ'ունի Ս. Յակոբայ վանուց մէկ հո-
ղին վրայ, նոր դատ մը բանալ նոյն իսկ
վանքին դէմ: Ընդհանրապէս կը կարծուի
թէ Պետական Խորհուրդն հաստատական
պատասխան մը տալով այս հարցման, Ե-
րուսաղիմայ դատն յոյժ նպաստաւոր երե-
ւոյթ մը կրնայ ստանալ:

Նախաձեռնութիւնը չը պատկանիր Յունաս-
տանի որ յոչլամն պիտի ցրուէ իւր զօրքեր,
այլ մեծ Տէրութեանց՝ որք ազդուապէս ոյժ
կուտան Բ. Դրան արդարացի պահանջման:
Աթէնքի դեսպանը երկուշաբթի օրը Պ. Տէ-
լիեանիի յանձնեցին Վերջնագիր մը որ ութ
օրուան պայմանաժամ կուտար Եօրկիոս
թագաւորին կառավարութեան՝ իւր զօրքերը
ցրուելու համար: Թէեւ Հովասի հեռագիր
մը ծանոյց այս առաւօտ թէ նախարարա-
պետը պատասխաներ է Վերջնագրոյն, յի-
շեցնելով համանման ծանուցագիրն որով
հելլէն կառավարութիւնը կը յայտարարէր
հաւանիլ Պրանսայի խորհրդոց, սակայն այս
պատասխան փախտի ձանձրայ մը կը նկա-
տուի եւ չը կարծուի որ գոհացուիէ զԵւ-
րոպա: Յունաստանի դործնական պատաս-
խանը կրնայ լինիլ պաշտօնական թերթին
միջոցաւ հրատարակեալ արքայական Հրա-
մանագիր մը որ սահմանադրւոյն վրայ հա-
մախմբեալ զօրաց ցրուումն հրամայէ. ա-
ռանց անոր, ոչինչ կրնայ երաշխաւորել թէ
Տէրութիւնը ի գործ չը պիտի դնեն իրենց
սպառնալիքն, յաւարտ որոշեալ պայմանա-
ժամին, պաշարելով յունական նաւահան-
գիստներն և ետ կոչելով իրենց Աթէնքի
դեսպանները: Պիրէոնի առջեւ և Սուտայի
ծովախորշին մէջ համախմբեալ մարտանաւք
արտասովոր շարժման մը մէջ են և ամեն օր
տարբեր կողմեր կերթեւեկեն, իրենց ըս-
տացած հրահանգաց համաձայն: Ինչ որ ալ
լինի խնդիրը կրնայ պարզուիլ յառաջիկայ
շաբթու սկիզբն յորում կը լրանայ Վերջ-
նագրոյն պայմանաժամը:

* *

Թուսիոյ Կայսրը Լիւլատիա (Խրիմ) կը
գտնուի ուր Վեհ: Սուլթանի կողմէ իբր
արտասովոր պատուիրակ ղրկուեցաւ Ներ-
քիւ գործոց նախորդ նախարար Բարձր.
Էտհէմ փաշա: Թէեւ ի սկզբան Վսեմ: Սէր-
վէր փաշայի յանձնուած էր այս պաշտօն,
Դատական նախարարն վերջին պահուն հի-
ւանդանալով, չկրցաւ մեկնիլ: Զարն իւր
ներկայութեան ընդունելով օամ պատուի-
րակն, յայտարարեւ է թէ, գոհ է մեծապէս
տեսնելով որ կ'ամրապնդուին երկուց պե-
տութեանց բարեկամական կապերն: Զարին
այս յայտարարութիւն բարեդէպ նշանակու-
թիւն մ'ունի:

Տ. Ա.

Ս. ԳԵՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ ՍՈՄԱԹԻՈՑ

Ահաւոր հրդեհն 1886 ի ամբողջ Սամաթիացւոյն նիւթական տան հետ լավիւնդեց նաեւ նորա բարոյական հոգեւորունն, զհոյակապն Ս. Գեորգ՝ հանդերձ եկեղեցեակներով, վարժարաններով եւ ընտիր ձեռագրովք ու տաղարովք ճոխ թանգարանաւն։

Սամաթիացիք հրդեհէն մի քիչ վերջ առանց իսկ ուղարկութեան առնլու իւրեանց պարագաւեր վիճակ՝ յառաջդիմական եռանդեամբ իւրեանց ձեռնարկեցին ի շինութիւն երկուս վարժարանացն եւ յաջողեցան ներկայ հոյակապ շէնքերն բարձրացնել շնորհիւ այն բարերարաց՝ եկեղեցական թէ աշխարհական, որք նիւթապէս եւ բարոյապէս սատար հանդիսացան, եւ որոց ամենեցուն սիրելի անուանք յաւէրժ պիտի յիշատակուին օրհնութեամբ։

Եւ որովհետեւ ոչ միայն Սամաթիացւոյն այլ ամբողջ Ազգին արժանապատուութեան դէմ էր երկու հոյակապ վարժարանաց միջոցն եկեղեցին տեսնել այնպէս աւերակ՝ ուստի ըստ բուն փափաքանաց ժողովուրդեան եւ ըստ խրախուսանաց եւ քաջալերական խոստմանց ողբացեալ Տ. Ներսէս Ս. Պատրիարքի, որ ապահովեալ էր Ազնուաշուր Մ. եւ Յ. Յակոբեան առաքինասէր եղբայրներէ՝ թէ պիտի վայելեմք եւ ի նոցունց զկարեւորն օժանդակութիւն, ձեռնարկեցինք Եկեղեցւոյն հիմնարկութեան յամին 1884 ապրիլ 22։

Հակառակ հիմանց շինութենէն վեր ելած յուսահատական դժուարութեանց, այնպէս որ հարաւային կողման պեղումն մինչև 15 կանգնոյ խորութեան հասաւ, ամենայնի յաղթող հանդիսացաւ աշխատութիւնն, յորում գովելի բաժին մ'ունեցան մեծամասնութիւն Սամաթիացւոց, Պատ. Թաղ. Խորհուրդն եւ շինութեան Մասնաժողովն՝ արժանի շնորհակալութեան։

Անցեալ տարի երբ վերսկսաւ շարունակութիւն շինութեանն՝ Ազնուաշուր Մ. եւ Յ. Յակոբեան եղբարք ըստ իւրեանց խոստմանց չզլացան իւրեանց օժանդակութիւններն հետզհետէ։ Յաւաթ է ըսել ապա թէ Նոյն Աշխատութեանց այս գործ օգնականութեան սխալ ըմբռնեցաւ։ Կարծեսցաւ թէ այլ եւ եկեղեցին փ

ժայն Աշ. Յակոբեան փոքի շինեւ. ուստի հանգանակութիւնն սկսաւ կաղն ի կաղ ընթանալ, հետեւաբար բազումք ի Սամաթիացւոց իրենց ստորագրեալ գումարն հատուցանելու, ինչպէս նաեւ խիստ բազումք ի ձեռնհաս ազգայնոց մայրաքաղաքիս հանգանակութեան մասնակցելու մասին անփոյթ գտնուեցան։

Արդիւնք այս սխալ ըմբռնման այն եղաւ՝ որ այսօր Աշ. Յակոբեան եղբարք արդէն իրենց նպատակէն աւելին վճարած լինելով բնականաբար դադրեցուցին իրենց օգնութիւնն եւ Աշ. Յակոբեանց օգնութեան դադարմամբն դադրեցաւ շինութեան շարունակութիւնն գրեթէ աւարտելու մօտեցած պահուն։ Ղի շէնքի կամարի ձեւին ամբողջացած՝ որմերն, յատակն եւ ատաղձի մասն մնացած է, իբր 6-700 ոսկւոյ գործ՝ 500 ոսկւոյ մօտ պարտքով մը։

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրեն արդէն ասկէ առաջ օրհնութեան յատուկ կոնդակաւ հրաւէր կարգացած է աւան ձեռնհաս ազգայնոց մասնակցելու համար սոյն բարեպաշտական գործոյն հանգանակութեան։ Մեր Նորին Բարձր. Սրբազնութեան հայրական յորդորներն յիշեցնելով Հայ հասարակութեան ազդու կոչումն կ'ընեմք այն ամեն ձեռնհաս Ազնիւ Հայոց՝ որք տակաւին չեն մասնակցած հանգանակութեան, որպէս զի երբ Ս. Գեորգ Եկեղեցւոյ շինութեան հանգանակիչ Մասնաժողովոյ Պատուարժան անդամք վերստին դիմեն իրենց՝ զուարթերես եւ սիրայօժար մատուցանեն իրենց կամաւոր նուէրներն՝ ինչպէս կը մատուցանեն ուրիշ պարագայից մէջ, որով ժամ յառաջ աւարտի շինութիւնն եւ չմնայ կիսկատար յամօթ եւ ի նախատինս Հայ Ազգիս՝ որուն կը պատկանի նոյն շէնք։

Խոնարհ աղօթարար

ԳԵՈՐԳ Վ. ԻԻԹԻԻՃԵԱՆ

10 ապրիլ 1886 Սամաթիա.

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻ ԻՐԱԳՐՈՅ